# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

**Հասցեատեր՝**
«Ալաշկերտ» ՖԱ ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcalashkert.am

«Բենտոնիտ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ bentonit.fa@mail.ru

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13.11.2023թ.**

---

| | |
|---|---|
| Վարույթ՝ | ԿԱԽ2-004 |
| Խախտում՝ | «Բենտոնիտ Ազատամուտ» թիմի արձանագրությունում գրանցված պաշտոնյաների բացակայության պատճառով խաղի չկայանալը (Հավելված 1 Է, 14-րդ կետ) |
| Առաջնություն՝ | Կանանց ԱԽ2 |
| Խաղ՝ | «Ալաշկերտ աղջիկներ» - «Բենտոնիտ Ազատամուտ» 24.08.2023թ. |

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն** (այուհետ՝ Կոմիտե),

**Հաշվի առնելով** 2023 թվականի սեպտեմբերի 7-ին թիվ ԿԱԽ2-004 կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշման մեջ տեղ գտած ակնհայտ սխալը,

**Հիմք ընդունելով** ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետը, 37-րդ հոդվածի 12-րդ կետը, 39-րդ հոդվածի 1-ին կետը և 48-րդ հոդվածի 1-ին կետը, որոշեց՝

2023 թվականի սեպտեմբերի 7-ին թիվ ԿԱԽ2-004 կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետում ««Բենտոնիտ Ազատամուտ» թիմի արձանագրությունում գրանցված պաշտոնյաների բացակայության պատճառով խաղի չկայանալու համար «Բենտոնիտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝

50,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով» նախադասության հատվածը շարադրել ««Բենտոնիտ Ազատամուտ» թիմի արձանագրությունում գրանցված պաշտոնյաների բացակայության և «Ալաշկերտ աղջիկներ» թիմի արձանագրությունում գրանցված պաշտոնյաների բացակայության պատճառով խաղի չկայացման համար թույլատրել վերանշանակել «Ալաշկերտ աղջիկներ» - «Բենտոնիտ Ազատամուտ» հանդիպումը։»։

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝**

**Կարեն Հովհաննիսյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։
- Եթե Ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական եւ էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է։ Միեւնույն ժամանակ այդ կարգաահական միջոցը գումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետեւանքով կիրառվող միջոցին։